ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 17.05.2019թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2019/24

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձն՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի

Մասնակցությամբ՝ «Թի Էն Սաունդ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝

Ս. Սիմոնյանի (լիազորագիր, տրված՝ 29.04.2019թ.)

ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 18.04.2019թ. թիվ 26/26-1/6543-2019 գրությամբ «Թի Էն Սաունդ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Երևանի քաղաքապետարանի 03.04.2019թ. թիվ 01/61-5742 գրության հիման վրա, 18.04.2019թ. թիվ 26/26-1/6543-2019 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ խնդրելով նախաձեռնել «Թի Էն

Սաունդ» ՍՊԸ-ին (հետայսու՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. «Թի Էն Սաունդ» ՍՊԸ ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

«Թի Էն Սաունդ» ՍՊԸ-ն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է, որ Ընկերությունը մասնակցել է «ԵՔ-ՀՄԱԾՁԲ-19/1» ծածկագրով հրատապ մրցույթին (հետայսու՝ Ընթացակարգ):

Հետևելով գնման ծրարների բացման ընթացքին, Ընկերությունը նկատել է, որ վերջինիս ներկայացված գներն ավելի բարձր են այլ մասնակիցների ներկայացրած գներից:

Այդ ընթացքում Ընկերության էլեկտրոնային փոստն անհասկանելի է եղել, որի պատճառով Ընկերությունը չի կարողացել հետևել և տեղեկանալ Երևանի քաղաքապետարանի (հետայսու՝ Պատվիրատու) կողմից հայտի չստորագրված լինելու գրությանը, որն էլ պատճառ է հանդիսացել Ընկերության՝ ընթացակարգում ներգրավված լինելուն:

Ընկերությունը փոխել է էլեկտրոնային փոստը: Նախկին՝ Ընթացակարգի փաստաթղթերում նշված փոստը հնարավոր է եղել բացել մի շարք վերականգնողական ընթացակարգեր իրականացելուց հետո:

Հաշվի առնելով տեխնիկական պատճառներով էլեկտրոնային փոստի անհասանելիությունը՝ «Թի Էն Սաունդ» ՍՊԸ-ն խնդրել է Ընկերությանը չներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

«Թի Էն Սաունդ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2019/24 ընթացակարգի շրջանակներում 30.04.2019թ. ժամը 10:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է վերոհիշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

3. **<u>Երևանի քաղաքապետարանի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>**

Երևանի քաղաքապետարանը ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 03.04.2019թ. թիվ 01/61-5742 գրությամբ հայտնել է, որ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով Երևանի քաղաքապետարանի կողմից կազմակերպված «ԵՔ-ՀՄԱԾՁԲ-19/1» ծածկագրով հրատապ մրցույթին մասնակցության հայտ է ներկայացրել «Թի Էն Սաունդ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի շրջանակներում «Թի Էն Սաունդ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում արձանագրվել է անհամապատասխանություն՝ հայտի թիվ 1 հավելվածը հաստատված չի եղել էլեկտրոնային թվային ստորագրությամբ:

Գնահատող հանձնաժողովը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու՝ Կարգ) 41-րդ կետի պահանջներով, ծանուցել է Ընկերությանը մեկ աշխատանքային օրյա ժամկետում անհամապատասխանությունը շտկելու անհրաժեշտության վերաբերյալ:

«Թի Էն Սաունդ» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում չի շտկվել անհամապատասխանությունը և գնահատող հանձնաժողովը, ղեկավարվելով Կարգի 42-րդ կետի պահանջներով, մերժել է Ընկերությանը հայտը:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2019/24 ընթացակարգի շրջանակներում 30.04.2019թ. ժամը 10:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. **<u>ՍՑ-ՆԳ-2019/24 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>**

ՍՑ-ՆԳ-2019/24 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. Երևանի քաղաքապետարանի կողմից Երևանի քաղաքապետարանի կարիքների համար կազմակերպվել է «ԵՔ-ՀՄԱԾՁԲ-19/1» ծածկագրով հրատապ մրցույթ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Թի Էն Սաունդ» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 14.03.2019թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ «Թի Էն Սաունդ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված թիվ 1 հավելվածը հաստատված չէ էլեկտրոնային թվային ստորագրությամբ:

Հիմք ընդունելով Կարգի 41-րդ կետը՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարը սահմանված կարգով ծանուցել է «Թի Էն Սաունդ» ՍՊԸ-ին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել հայտում արձանագրված անհամապատասխանությունը:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 18.03.2019թ. ժամը 16:20-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշմամբ «Թի Էն Սաունդ» ՍՊԸ-ի հայտը մերժվել է այն հիմնավորմամբ, որ Ընկերության կողմից սահմանված ժամկետում չի շտկվել արձանագրված անհամապատասխանությունը:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 18.04.2019թ. թիվ 26/26-1/6543-2019 գրությունը, Երևանի քաղաքապետարանի 03.04.2019թ. թիվ 01/61-5742 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 20-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու և (կամ) որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին

անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:

Երևանի քաղաքապետարանի կողմից Երևանի քաղաքապետարանի կարիքների համար կազմակերպվել է «ԵՔ-ՀՄԱԾՁԲ-19/1» ծածկագրով հրատապ մրցույթ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Թի Էն Սաունդ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 14.03.2019թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ «Թի Էն Սաունդ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված թիվ 1 հավելվածը հաստատված չէ էլեկտրոնային թվային ստորագրությամբ:

Հիմք ընդունելով Կարգի 41-րդ կետը՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարը սահմանված կարգով ծանուցել է «Թի Էն Սաունդ» ՍՊԸ-ին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել հայտում արձանագրված անհամապատասխանությունը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 18.03.2019թ. ժամը 16:20-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշմամբ «Թի Էն Սաունդ» ՍՊԸ-ի հայտը մերժվել է այն հիմնավորմամբ, որ Ընկերության կողմից սահմանված ժամկետում չի շտկվել արձանագրված անհամապատասխանությունը:

Այսպիսով՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցը ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Կարգի 32-րդ կետի 20-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում ***չի ներկայացնում հրավերով նախատեսված***

փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում սպանձնված պարտավորության խախտում:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ գտնում եմ, որ «Թի Էն Սաունդ» ՍՊԸ-ն «ԵՔ-ՀՄԱԾՁԲ-19/1» ծածկագրով հրատապ մրցույթի շրջանակներում թույլ է տվել Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պարտավորության խախտում, քանի որ սահմանված ժամկետում գնահատող հանձնաժողովին չի ներկայացրել հայտի թիվ 1 հավելվածի շտկված տարբերակը, ուստի գտնում եմ, որ առկա են Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 18.04.2019թ. թիվ 26/26-1/6543-2019 գրությամբ «Թի Էն Սաունդ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և «Թի Էն Սաունդ» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**